

Ի ՊԱՏԻԻ

ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐԻԻ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՌԳԵԿՈԶՈՒՄ Ս. ՂԱԶԱՐԻ ՄԷԶ

(26 Նոյեմբեր 1978)

Միֆթարեան Հայրերու Ս. Ղազարու Հայկական Կանառի գործունէութեան 1978-79 տարեշրջանի առաջին նիստը նուիրուեցաւ հանդիսապէս ոգեկոչելու ԺԸ. դարու մեր ազգային, եկեղեցական ու մշակութային կեանքի լուսաւոր դէմքերէն՝ Կ. Պալսոյ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքը, իր ծննդեան 300ամեակին առիթով:

Ի ներկայութեան վանաբնակ բոլոր Հայրերուն, նիստին նախագահեց Միաբանութեան Ընդհ. Աբբահայրը՝ Գեր. Պօղոս Վրդ. Անանեան, որ դրուատիքի բառերով բացաւ հաւաքոյթը:

Յաջորդաբար, Կանառին Քարտուղարը՝ Հ. Լեւոն Զէֆիեան յոտընկայս կարդաց Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական կոնդակը, նուիրուած Կոլոտ Պատրիարքի ծննդեան 300ամեակի յորելինական յիշատակին:

Հուսկ՝ Հ. Սահակ Ճեմնեմեան հանդէս եկաւ պատմաֆնական ընդարձակ ուսումնասիրութեամբ մը, խորագիր ունենալով՝ «Յովհաննէս Կոլոտ Պատրիարք եւ Միֆթար Աբբահայր»: Մեծարգոյ բանախօսը, այս առիթով, կը յայտնաբերէր Ս. Ղազարու դիւանական վաւերաթուղթերուն մէջ պահուած բազմաթիւ նորանոր նիւթեր՝ Կոլոտ Պատրիարքի մասին, ջանալով համադրել բոլորը՝ ժամանակակից դէմքերու եւ ըմբռնումներու լոյսին տակ, ընդգծելու համար Կոլոտի կենսագրութեան զանազան դրուագները, որոնցմէ կը ցայտեն անոր գրասիրութիւնը, հաշտարար ու լայնախոհ ոգին՝ դարուն եկեղեցական բարդ խնդիրներուն մէջ, ինչպէս նաեւ գնահատանքի եւ համակրանքի ջերմ արտայայտութիւնները՝ Միֆթար Աբբահօր անձին ու գործին նկատմամբ:

Սոյն բանախօսութիւնը, վերամշակուած, լոյս կը տեսնէ «Բագմավէպ»ի ներկայ թիւին մէջ, իբր յաւելուած ունենալով Կարապետ Կաթողիկոս Ուլնեցիի (1726-1729) անտիպ ինֆնակենսագրութիւնը, ուր նոյնպէս կը յայտնուին կարեւոր տուեալներ՝ Կոլոտի կեանքին ու գործունէութեան շուրջ:

ԽՄԲ.